



ՏՆՕՐԻՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 28

ՀԱՐԱԹ

8 ՄԱՐՏ 1908

ԱՐԱՋՆԱԿԱՐԳ ԺԱՄԱՑՈՑՆԵՐ

# ԶԵՆԻԹ

ԱՐԱՋՆԱԿԱՐԳ ԺԱՄԱՑՈՑՆԵՐ

ՄԻԱԿ ՆՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻԶ

Գ. ՍԱՐԳԻՍՈՑ ԵՒ ԸՆԿ.


Պաշտոն-Գարու, Օռոգտի-Պաք հաստատութեան դէմ, Թիւ 16

Հատոր 40 փաթա

(آ. آصااوربان) شرکت صراییه مطبعه — باب عالی جاده سنده نوسو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապր-Ալի ճառարանի քիւ 52



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի  
լիւսանգամայն մեքենաներ  
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ,  
բայց էական կէտն է լուս մեքենայ մը ունենալ, որովհետեւ լուս  
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-  
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց  
եւ առգոռուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

**Ս Ի Ն Կ Է Ռ**

ՀԱՅԺԱՅԺԻՉ ԿԱՅԺ. ՊԱԼԱՏԱՆ

**THE SINGER**

MANUFACTURING COMPANY



մեքենան լուսագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործութեամբ,  
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՍԻՆԿԵՐԻ  
ՄԵՔԵՆԱՆԵՐԸ  
ԿԵՆԵՐԸ  
ԿԱՅԺ. ՊԱԼԱՏԱՆ

ԲԵՐԸ

( 1. Մեծ փողոց, Պոն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին .

( 2. Մեծ փողոց, Կալաթա Մէրայի Լիսէին դէմ .

ԿԱԼԱԹԱ

( 1. Սինկեր Խան, Թիւնէլի ետեւը .

( 2. Գարաջէօյ, Թրամվէյի կայարանին դէմ .

ՊՈԼԻՍ

( 1. Սուլթան համամ .

( 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 .

ՍԵԻՏԱՐ

Չարչը Պոյու, թիւ 120 .

Կասարեալ երաժիշտութիւն

Մասնագիտեր զաւաններու քոյր ֆաղսֆներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ  
343 կրկին, Տիւրքիոյ տունը:



**ՐԵԲԵԼ**

ՕՐԱ-

ԹԵՐԹ ազգային, գրական եւ քաղաքական :  
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլ-  
սոյ համար 80 դր. վեցամսեայ 45 դր. դա-  
ւառներու համար տարեկան 108 դր. վեց-  
ամսեայ 60 դր. և օտար երկիրներու համար  
տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20 ֆր. Ձեռքէ  
վաճառում՝ քաղաք փարա: ԱՐԵԲԵԼ Բ  
հրա լարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խը-  
նաւալ բովանդակութեամբ, ընտիր յօդուած-  
ներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղե-  
կութիւններով:

ԱՐԵԲԵԼԲ, իր վերակազմուած խմբ-  
բազմութեամբ և իր կարող աշխատակիցնե-

րով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տե-  
ղական հայ մամուլին մէջ:

Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏ-  
ԿԵՐՍԱՐԻ ԸՂԼԱՐԻ հանգամանքը, որով իր  
ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերա-  
բար: Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ տեսա-  
բաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մաս-  
նագիտական յօդուածները, եկեղեցական,  
կրօնական, տնտեսական-սեղանաւորական,  
երկրագործական, իրաւաբանական եւայլն,  
բացի գրական, բանասիրական գրուածքնե-  
րէ: օրուան տեսութիւններէ եւայլն:

ԱՐԵԲԵԼԻ վերաբերեալ ամէն գրութիւն  
ու բաժանորդագրին պէտք է ուղղել Տէր և  
Տնօրէն Գարեգին Էֆ. Պոյաճեանի հասցէին,  
Ղալաթիա, Մաճուռի Ճատտէսի, ուր հաս-  
տատուած են թերթին տպարանն ու խմբ-  
բազմութեանը:



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶՆԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 28

ՇԱՐԱԲԱԹ

8 ՄԱՐՏ 1908

## ԲԱՐՈՅԱԽՕՍՆԵՐԸ

«Արուեստը արուեստին համար պէտք է ըլլայ, թէ արուեստը մարդկային օգուտին համար»:

Քանի որ ատոր տակէն չպիտի կրնար ելլալ, չեմ հասկնար թէ ինչո՞ւ այդ հարցումը ինքզինքին ուղղեր է ... քիթիբիոսին մէկը:

Ահաւասիկ այսպէս, մարդս պզտիկ կը մնայ երբ պոյէն վեր գործերու կը խառնուի:

Իրիկունը, Իւսկիւտարի վերջին շոգենաւին մէջ, խուլումնիներու չարչիին պատկանող աղաներ պիտի գտնուին որ թերթի մը այդ չեմ գիտեր քանի երբորդ խմբագրին ձեռքը պիտի սեղմեն և Տիւզ հոտող բերանով մը պիտի ըսեն իրեն.

— Զա՛րկ, ծօ՛, սա ԷՏԿԱՍԻԳՆԵՐՈՆԸ խափային:

Եւ մեր բարոյախօսը, այդ խրախուսանքներէն քաջալերուած, աչքին չպիտի երեւայ երկայնութիւնը բօքա Եօլբլին որ Իւսկիւտարի Գողգոթան է:

«Կը խոստովանինք թէ այդ կարգի բաց գրութիւնները ամենէն շատ և ամենէն առաջ կը կարդացուին թերեւս. բայց գրող մը պէտք է հրապուրուէր այդ պարագայէն»:  
Je t'écoute! mon vieux! —

Սովորական, աչքուած կեանքի մէջ, փոքրիցաւ ունեցողները երկու տաք կղմինտր կը կապեն պորտերնուն, գրականութեան մէջ այդ ցաւէն բռնուողները բարոյալից յօդուածներ կը փսխեն առտու կանուխ:

Եւ օրը իրիկուն կըլլայ:

Վերջը չեկաւ սա բարոյախօսներուն, չի հատան:

Տասնըհինգ օրը անգամ մը, բարեպաշտօրէն, բարոյականի ճերմակ պատմութեանը ուսերնուն, նայիս մէջտեղ կելլեն ախոյեանները այդ այլեւս անկարելորդ պարոցին և իւզող չըթներով պաշտպանելու կելլեն դատ մը որ շատ շատ Թօփ-խափույի և Հալըճը-օղլուի պանդոյրները կրնայ հետաքրքրել միայն:

ձեմարանի այդ աւելցուքները, որ գրականութեան մէջ այնպէս կընթանան ինչպէս խեղափառները ջուրին մէջ, oeuvre pie մը կատարած ըլլալ կը կարծեն երբ պարբերաբար հարուածելու կեղեկն այն գրագէտները որ վրան-բաց գրողի համբաւով կը փառաւորուին:

Եւ կը բարկանան երբ կը տեսնեն թէ իրենց մատուցած այդ ծառայութեան փոխարէն, Կրօն. Ժողովը կը վարանի տակաւին օրհնութեան կոնդակ մը զրկելու իրենց լանջախաչ մըն ալ միասին:

Beati poveri di spirito! —

Երկնից արքայութիւնը իրենցն է և խապար չունին:

Մի ոմն — իբրեւ թէ արջասպ քսող կայ իրեն չեմ գիտեր որ տեղին և կամ պահապանը եղած ըլլար բարոյականի գանձերուն — խարազան մը ի ձեռին բան գործ ըրած է հարուածել eliteը մեր այն գրագէտներուն որ վրան-բաց գրողի համբաւը իրենց տրուած ըլլալուն համար՝ բան մը չեն կորսնցներ իրենց ժողովրդականութենէն և այն համակրանքէն որով չըջապատուած են ասոնք:

Վրան-բաց գրականութիւն, այո՛, մեր ըրածը այդ է և յետոյ ...:

Միտի բարոյախօս, ձեզի բան մը ըսեմ, ականջնուդ օղ ըրէք: Դուք, ձեզիպէտները, բոլոր Սիմօն Ծերունիները, բոլոր Պարոյանները, բոլոր Աղքատ Ղազարոսները — գրածներէն յայտնի է աղքատ ըլլալը, չեչտելու պէտք չկայ — մէկ բառով ամբողջ ձեր cliquer, առջեւնիդ ձգելով ձեր քրմապետը, նախահայրը Հորոն — որուն համար, այս խնդրէն զատ՝ մեծ ակնածանք մը ունիմ — եթէ ամէնքդ միասին գալով ձեր ոյժերը հաւաքելով պոռաք կանչէք, նորէն մենք պիտի դիմանանք, մեր գիտցածէն չպիտի չեղինք և պիտի շարունակենք այն դպրոցը զոր ուզածնուդ չափ վրան-բաց կոչեցէք:

Կատակը մէկ կողմ ձգենք հիմա և ըսէք ինծի, ինչդրեմ, թէ վրան-բաց գրականութիւն ըսելով ինչ կը հասկնաք: — Անբարոյականութիւն, իրաւ, oh! que vous êtes naïfs.

Թէ երեսիս և թէ ետեւէս ըսողներ շատ

կան թէ հայերուն մէջ ամենէն աւելի վրան-բաց գրողը ես եմ: Շատ զգածուած եմ ինծի տրուած այդ պատուէն, շնորհալի révérence մը ամենուդ, և լաւագոյնները շնորհակալութիւններու: Բայց երեսին պիտի թքնէի անոր որ պիտի համարձակէր ըսելու թէ ըրածս անբարոյական գործ մըն է:

Կընդունիմ որ թերեւս ես եղած ըլլամ առաջինը որ քաջութիւնը ունեցած ըլլամ նկարագրելու կնկան մը սրունքը, ծիծերը, ուսերը և ծոծրակը, և կամ ուրիշներէ տարբեր ոճով մը բացատրած ըլլամ սիրոյ անուշութիւնը և համը կանացի գգուանքներուն:

Առաջին անգամ décolletéով պարահանդէս գացող հայ կինը կախեցին միթէ: Երբո՛ւրնէ ի վեր է որ կը պախարակեն մերի արձաններ չինող քանդակագործը և կամ խաչը կը հանեն զիրար համբուրող մանչու մը և աղջկան մը պատկերը նկարող արուեստագէտը:

Ինչպէ՛ս հասկցնելու է ասիկայ այն տեսակ մը տխմար արարածներուն որ զանազանի չեն գիտեր իրապաշտ դպրոցին պատկանող գրութիւնները՝ պոռնկախօս (pornographique) գրականութենէն:

Պոռնկախօսութիւնը, որ անշուշտ իր հետ կը բերէ անբարոյականութիւնը, տակաւին մեր գրականութեան մէջ մշակուած ճիւղ մը չէ: Մեր մէջ ամենէն շատ վրան բաց կարծուած գրութիւնը չի հաւասարի տակաւին Պուրժէի, Բոէլժոյի, Տօտէի, Օնէի և ասոնց պէս շատ մը վիպասաններու էջերուն և երբէք այս հեղինակները անբարոյական գրողի անուն հանած չեն, որքան որ գիտեմ:

Սրունքի մը նկարագրութիւնը կը գայ թակղեցնէ միայն այն մարդիկը որ Ագաթանգեղոս կը կարդան, քթերին Սաղմոսէն դուրս չեն հաներ և Հորոյի յօդուածներէն զատ ուրիշ բանէ համ չեն առներ: Ինծի համար աւելի անբարոյական է այն գրողը որ քանի մը զրուչի համար առաջնորդութեան աթոռի մը անարժան վարդապետի մը թեկնածութիւնը կը պաշտպանէ՝ քան այն գրագէտը որ թովիչ ոճով մը կը մանրամասնէ ամսօրի մը dessousները:

Տարիներէ ի վեր վրան-բաց ըսուած գրականութիւնը կը մշակեմ և երբէք խղճի խայթ մը չեմ ունեցած, որովհետեւ սա հա-

մոզումը ունիմ որ թէ նոր սերունդին և թէ հինին բան մը աւելի սորվեցուցած չեմ ...  
գաղտնիքներուն աշխարհէն:

Այսօրուան օրս ութը տարու մանչ մը կամ աղջիկ մը շատ աւելի բան գիտէ ինքնին՝ քան բոլոր այն վրան-բաց բաները որոնց համար կը դատապարտեն զմեզ:

Բարեշրջութեան օրէնքով, այս այսպէս պէտք էր ըլլալ: Որքան մարդիկ կը զարգանան՝ վրան-բաց գրականութիւնը այնքան կուսճանայ: Վրան-բաց գրականութիւնը ըսելով ես կը հասկնամ՝ ըսել բաները այնպէս ինչպէս որ են, և պատկերացնել կեանքը եղածին պէս:

Ամենէն շատ զմեզ կը կարգան եղեր: Աւատիկ ապացոյցը մեր զարգացումին:

Ասոր համար է որ երբէք պահանջած չեմ որ Գլիի կամ Խնուսի մէջ ալ յօդուածներս այն յաջողութիւնը ունենան ինչ որ կը գրտնեն Բերայի մէջ:

Ուրիշ բան մը:

Դուք կը կարծէք թէ ձեր տիրացուական յօդուածներով վարկաբեկ պիտի կրնաք ընել գրական այն ճիւղը որ մեզի հաճելի է ինչպէս նաեւ մեր ընթերցողներուն:

Անօգուտ ճիգ, պարապ յոգնութիւն:

Մտքերնուդ ալ մի անցնէք թէ օրին մէկը կրնանք վհատիլ և կը դադրեցնենք ինչ որ սկսած ենք արդէն:

Դժուարութիւններ յարուցանելու ձեր եղանակը կը նմանի այն տւրի խաղերուն որով ձիու մը կարողութիւնը կուզեն չափել:

Հինգ վեց ոտք բարձրութեամբ ձողեր (barrieres) կը կանգնեցնեն և կը մտրակեն ձին որ վրայէն ցատկէ: Երկրորդ փորձին՝ բարձրութիւնը եօթէն ութը ոտքի կը հանեն, ձին նորէն կը ցատկէ վրայէն:

Բայց երբ աւելի փորձելու համար ձիուն այժը, այդ ձողերը մինչեւ տասը ոտք կը բարձրացնեն, գիտէ՞ք, ձին ինչ կրնէ: Հեռուէն կը վազէ և երբ կը տեսնայ թէ առոր վրայէն ցատկելը դժուար է, առանց կարեւորութիւն տալու ինչ պիտի բսեին, չորս կողմը չի նայած, փոխանակ այդ ձողերու վրայէն ցատկելու... տակէն կանցնի կերթայ:

Յ. Ա.Լ.ՓԻԱՐ

## Ի ՊԷՏՍ ԶԱՐԳԱՑԵԼՈՑ

— ԵՒ ... ՆՈՐԱԾԻՂ ՔԵՐԹՈՂԱՑ —

Ի Ք Ն Ա Ր Ն

Կամիմ զԱսրիդրս նուագել  
Կամիմ երգել ըզԿադմեանն՝  
Այլ բանքեռանս իմոյ թել  
Անդրաձայնէ զՍե'ր միայն:

Երբեմն զլարս փոխեցի  
Եւ ըզնար գլխովին,  
Ձերզս Հերիւլեանս երգեի՝  
Նա զՍե'ր կրկնէր վերսին:

Բարեա՛ւ ապա՝ սիրելի՛՛  
Սրնայք բարեաւ յաւիտեան,  
Ձի բանդեռանս իմ աղիք.  
Դիտեն երգել Սե'ր միայն:

ԱՆԱԿՐԷՈՆ, ՏԱՂ Ա.

\* \* \*

Ի Կ Ա Ն Ա Յ Ս

Բնութիւն եղջերս ես ցրուց  
Երիվարաց ես ամբակ,  
Եւ մահագին առիւծուց  
Նապաստակաց ոսւ երագ:

Լուղակ՝ ձրկանց, նաւուց՝ թեւ,  
Արանց՝ ոգի զօրութեան,  
Կանանց չունեք ինչ այլ եւս,  
Եւ ո՛ր պարգեւք նոցա բռան:

Գեղեցկութիւն ես նոցին  
Ընդ ամենայն ահաստան,  
Հրոյ, ուժոյ յաղթէ կին  
Ի գեղն եւեթ ապաստան:

ԱՆԱԿՐԷՈՆ, ՏԱՂ Բ.

Թարգմ.

Յ. ՅԵՐԶԵԱՆ

# ԿԱՎՈՐՈՇԱՊԱՏՈՒՄ

— Նուա՛րդ, պիտի խենթեցնես զիս:

— Մարկո՛ս, պիտի մեռցնես զիս:

— Նուա՛րդ, ա՛լ չափը անցուցիր:

— Մարկո՛ս, ա՛լ հէրիք ըրիր:

Ու կռիւը կը սաստկանայ:

Նուարդ՝ գեղանի ու մանկամարդ կին մը՝ ամուսնացած էր վեց ամիսուան Մարկոս Աղէկուկեանի (Աղաբէկեան չկարդա՛ք) հետ, հարուստ վաճառականը, որուն համար կըսէին թէ Ռօջիլտի չափ հարստութիւն ունէր:

Նուարդ՝ կապոյտ ներքնագգեստ մը հագած՝ օրրաթոռի մը մէջ բաղմած, Պարսամեանի վերջին հրատարակութիւնը կը կարդայ:

— Նուա՛րդ, կը յարէ ամուսինը, վա՛ղ անցիր սա տղուն գրածներէն, կը յուսահատեցնես զիս, պարկեշտ կնկան գործ չէ ըրածը:

— Մարկո՛ս, ձգէ որ սա բանաստեղծութիւններովը գինովնամ:

— Բանաստեղծութիւններով գինովնալը հիմակ հանց, ըսելով, անկիւն մը կերթայ կը նստի Պ. Աղէկուկեան:

Նուարդ կը շարունակէ ընթերցումը:

Մէկէն ի մէկ կը գոչէ.

— Մարկո՛ս, դուն ինչո՞ւ բանաստեղծ չես ծներ: Ինչե՛ր պիտի կրնայի ըսել այն ատեն, մինչդեռ հիմա...

— Նուա՛րդ, Աստուծոյ սիրուն, ձգէ՛ սա գիրքը ձեռքէ՛դ, եթէ ոչ...

— Եթէ ո՛չ...

— Ի՞նչ պիտի ըլլայ, Պարսամեանին համար պիտի...

— Պարսամեանին համար պիտի բաժնը՝ չի՛ք: Հո՛գս: Այս գիրքը պիտի ապրեցնէ զիս, զգացումի ի՛նչ նրբերանգութիւններ, սիրոյ ի՛նչ հրդեհներ, ի՛նչ յոյզեր, ի՛նչ անուրջներ:

— Խենթեցաւ նորէն, մրմնջեց Մարկոս, որ կը նեղուէր իրաւցնէ:

— Խենթեցան ի՛նչ է, դուն դրամը կը սիրես, ես Պարսամեանի բանաստեղծութիւն-

ները, յետոյ ինչո՞ւ այդքան կը նախանձիս, ամօթ չէ որ քեզի պէս փորձառու մարդ մը...

— Սա գիրքը պիտի ձգե՛ս ձեռքէ՛դ:

Նուարդ այս անգամ կը զիջանի:

Ութ օր կանցնի, երբ իրիկունը Մարկոս սովորականէն քիչ մը կանուխ տուն կուգայ, en flagrant délit կը տեսնէ իր գեղանի կինը ընթերցումովը բանաստեղծութիւններուն Պարսամեանին (բացատրութիւն ինչ՝ ալա ինովք Արմէն), որ այսպէս, հեռու ընտանեկան գգտութիւններու տեղի կուտար:

Նուարդ կը կարդար, կը կարդար շարունակ և իր ընթերցումին մէջ խորապէս մխրճուած, չէր զգացեր որ իր մեծապատիւ ամուսինը եկեր իր Հէրզիւլեան հասակը ցըցեր է սենեակին մէջտեղը:

— Նորէ՛ն...

— Նորէ՛ն, այո, ի՛նչ կայ:

— Վաղ չպիտի անցնիս դուն պարսամեանէն: Ամուսնութիւննիս... Պարսամեանի ծաղիկներով կը պծես, կակազեց Աղէկուկեան, կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով այս տեսակ... սրամտութիւն մը յղացած ըլլալուն հիմար չատ դո՛հ:

— Քեզի բան մը ըսեմ, Մարկո՛ս, ես քեզմէ վաղ կանցնիմ, բայց Պարսամեանէն երբեք: Անիկա իմ հոգիիս սնունդն է, անիկայ կեանքս է, անիկա յոյսս է, հաւատքս ու սէրս է...

— Սէր է մի... դուն կը տեսնես:

... Եւ չիտակ Դատաստանական Խորհուրդին ներկայացաւ:

Դատաստանական Խորհուրդին մեծայարգ անդամներէն մէկը խնդիրը քննելէ ետքը, ըսաւ Աղէկուկեանի,

— Տիա՛ր Մարկոս, կնոջը ըրածը հրապարակային երեւոյթ չունի, բարոյականի սահմանին մէջն է, և չենք յարմար դատեր ամուսնալուծման հրամանագիր մը յանձնել:

— Ուրեմն պիտի ձգէք որ կրնա Պարսամեանը սիրէ: Օհ մէռսի, չէ՛ չըլլար:

— Ի՞նչ ըսել կուզես, կինդ անոր գը-  
րածներուն հաւանք է ու կը սիրէ կարդալը  
դայն, ասոր մէջ ի՞նչ անպատեհութիւն կամ  
անհաւատարմութիւն կը նշմարես դուն:

— Պարսամեանին հետ կ'ապրի:

— Ի՞նչպէս:

— Գիշեր ցերեկ անոր գիրքին հետ է,  
գիշերը՝ անկողինին մէջ և ցերեկը՝ շրջա-  
զգեստին ծալքերուն խորը...

— Չեմ հասկնար:

— Հասկնալ չէք ուզեր: Եթէ ոչ խըն-  
դիրը շատ պարզ է. ինծի ամուսնալուծման  
հրաման տուէ՛ք, ես այս կնիւն հետ չեմ  
կրնար ապրիլ... Կերակուրի վրաղած ենք  
հայտէ Պարսամեանը մէջտեղ կը հանէ, կը  
քալենք Շիրտակէն, արդեօք սա՞ է Պարսամե-  
անը, աղւոր ոտանաւոր մը կը կարդայ  
ֆրանսերէն, արդեօք այս անունը Պարսամե-  
անին ծածկանունն է. Մերուժան հոս՝ Պար-  
սամեան հոն... ա՛լ համբերութիւնս հատաւ...  
յետոյ... վերջապէս, ամուսնական անկողի-  
նին գաղտնիքներն ալ չեմ կրնար պարզել  
ա՛...: Հարկաւ կը համկնաք...

— Ի՞նչ կրնանք ընել. ծիծաղելի է բա-  
նաստեղծի մը համար... ամուսնալուծուիլը...  
քանի որ կըսէք մանաւանդ թէ կինս՝ Պար-  
սամեանը չճանչնար, խնդիրը կը փոխուի,  
աւելի աղէկ է որ հայտուիք, ու կարգա-  
դրութիւն կը ընէք մէջերնիդ:

— Ի՞նչպէս:

— Այսինքն, որպէս զի մէջերնիդ յաւի-  
տենական սէրը գոյութիւն ունենայ, որպէս  
զի մէջերնիդ վէճ տեղի չունենայ բնաւ...

— Միակ ճամբան...

— Դուն ալ Պարսամեանը սիրէ, դուն  
ալ Պարսամեանի ծաղիկներ կարդա՛, անով  
գինովցիր:

Պ. Մարկոս Աղէկուկեան, այս թելա-  
գրութիւնէն բոլորովին գոհ և համոզուած  
կը մեկնի Դատաստանական Խորհուրդի ան-  
դամներէն մէկուն քովէն:

Ու կըսեն դրացիները թէ՛ անկից վերջը  
ա՛լ չլսուեցաւ անոնց տունին մէջ անհամա-  
ձայնութիւն և կազ ու կռիւ:

\* \* \*

Ատենօք կիները չէին որ իրենց ամուսնին  
կը հետեւէին ու կը հնազանդէին անոր...

Հիմա՛...

Où nous avons changé tout cela!...

ԵՐՈՒԱՆԴ ԹՕԼԱՅԵԱՆ

## ԲԱՑ ՆԱՄԱԿ

Պատ. Խմբագրութիւն

Հանրագիտակի

Թերթիդ 25րդ թիւին մէջ նոր աշխատա-  
կից Միգոօթիս «Մեր դերասաններուն շուրջ»  
դեգերելու առթիւ կը յիշէ, ի մէջ այլոց,  
Աբրահամեանց անուն դերասան մը:

Առաջին անգամ է որ կ'իմանամ այդ ա-  
նունով դերասան մը և շնորհակալ պիտի ըլ-  
լամ եթէ Ձեր աշխատակիցը ազնուութիւն  
ունենայ տեղեկութիւններ տալու թէ ո՛վ է  
դերասան Աբրահամեանցը, ո՛ր յիշուած է  
իր անունը, ո՛ր թուականին բեմ ելած է, և ըն.:

Ընդունեցէք կանխիկ շնորհակալութիւն-  
ներուս հաւաստիքը թէ՛ Ձեզի և թէ՛ Հան-  
րագիտակի «Անառակ որդի»ին համար:

Ս. ԴԱԽԹԵԱՆ

ՕՐՈՒԱՆ ԳԻՐԲԸ

ՄԵԾ ԲԱՌԱՐԱՆ

ՀԱՅԵՐԷՆԷ-ՕՍՄԱՆԵՐԷՆ

ՀԵՂԻՆԱԿ

ՊԵՏՏՐՈՍ ԷՃ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Պէրպէրեան վարժարանի բանիբուն անո-  
րէնը՝ Պետրոս էֆ. Կարապետեան, իր շարք  
մը օգտաշատ հեղինակութիւններուն կը բերէ  
կցել իր ստուար գործը Հայերէնէ-Տաճկերէն  
բառգիրքը, հատոր մը՝ որ անհրաժեշտ է ա-  
մէն դպրոցականի և ամէն անոնց՝ որոնք  
Օսմ. գեղեցիկ լեզուն հիմնովին սովորել կը  
փափաքին:

Պետրոս էֆ. Կարապետեան իւր առաջ-  
նակարգ ուսուցիչ Օսմաներէնի, լեզուին բո-  
լոր նրբութիւններուն գիտակցաբար հեղինա-  
կած է այս ընտիր գառարանը և իր կողմէ  
ճիշտ յաւելուածներով՝ պիտանի հատոր մը  
դարձուցած է զայն:

ԳԻՆ 35 ՂՐՈՒՇ

Կեդրոնացեղին՝ ՊԱԼԵՆՑ գրասուն.

# Անհրաժեշտ Օգտոր

En flagrant délit !

Յրանսերէն այս ոճը ատենէ մը ի վեր ջուրի պէս գործածական տեսնելով մեր գրական հրապարակին վրայ Յ. Ալփիարէն մինչեւ... Մալաթիացի աշուղին գրուած քննարկուն մէջ, ակամայ միտքս կիյնայ անակնկալ մը սիրային խել խօս ցափռտուքներէս, որուն նկարագրութիւնը հոս անցողակի թերեւս պահիկ մը փարատէ մեծ պահքի ձեր երկրորդ շաբաթուն ձանձրոյթը :

Մտիկ ըրէք :

Դպրոցական շրջանաւարտի և գործնական մարդու, երկու շրջաններուն միջեւ տատանեալ տարիքիս էր — կը հասկնաք անշուշտ — ուր կիյները հացէն, և օրիորդները ջուրէն աւելի հաճելի կերեւան աչքի, ահա այդ վիճակին մէջ էր երբ իրիկուն մը, չեմ գիտեր որ զբօսավայրէն դարձիս, ճամբան տեսայ զինքը, ամառուան թեթեւ rose սաթէն քօս-թիւմով, որ մօրկանը հետ տուն կը դառնար անշուշտ :

Իրիկնամուտի անուշ ստուեր մը տակաւ նուրբ շաղին պէս կը մաղուէր երկինքն ի վար : Յերեկուան տաքէն և կառքերու ձիերու անդադրում երթեւեկէն ձանձրացած բարակ փոշիի ամպ մը տարածուած էր կարծես գիւղին և երկնակամարին վրայ, հոս հոն կեցած գորշ ամպեր իրար ցուլուելով տեղատարափի մը վախը կազդէին, և ատոր համար էր որ, չատեր ձգելով կիրակի երեկոյեան զուարճութիւնը՝ իրենց սուները քաշուէին : Եւ ահա այն մտածումով տուն դարձողներէն էին այդ մայր և աղջիկը, որոնց կը հետեւէի ճամբուս վրայ, բոլորովին անծանօթներ մը անոնք ինծի ես անոնց :

Հինգ վեց քայլ հազիւ առած թէ չէ, յանկարծ օրիորդին վրայէն պզտիկ ճերմակ բան մը ինկաւ գետին... Ծռիլ առնելը եթէ ոչ հետաքրքրութեան՝ գէթ պարտակա-

նութիւն մըն էր ինձ համար, զայն տէրոջը յանձնելու համար : Առի :

Ճերմակ պոստէ թաշկինակ մըն էր, այն կարգ մը ձեռագործներէն՝ զորս աղջկանց վարժարաններու մէջ կը սովորին բանիլ, Ա. մառքայով և որ համակ Նեյրգի կը հոտէր...

Ձեռքիս մէջն էր հիմա փետուրէն թեթեւ ճերմակ այդ իրը որ, կեանքի աշունը վաշելողներու համար քուրջի կտոր մը, իսկ անոր դարունը ողջունողներու մասունք կրնայ համարուիլ :

Խնչպէս ըսի՝ իրիկնամուտի թանձր ստուերը ալ սկսած էր խաւարին տեղի տալ : Պահ մը մտածելէ, խորհրդածելէ վերջ, պահելու կամ վերադարձնելու մասին, որոշեցի քաղաքավար քուռնիւով մը յանձնել այդ համակ Նեյրգի բուրոյ առարկան :

— Ներեցէք... արդեօք քիչ մը առաջ գետնէն դտած սա թաշկինակը ձերն էր Օրիորդ, մը հազիւ արտասանած թէ չէ, ան ալ ջուրերու մէջ մնալով անվարժ փուռօտի մը պէս, անմիջապէս ետին դառնալով պատասխանեց՝

— Ահ, չատ շնորհակալ եմ պարոն, որ չափ երախտապարտ թողուցիք զիս... այո՛, իմս էր...

Ու երբ քայլերս արագ արագ առնելով կուզէի հեռանալ իրմէ, ընդ աղոտ լսեցի ջատուկ մօրկանը խօսքերը որ կըսէր...

— Թէփէ կէօզ կը քալէս ան է, չըլ՝ խտի...

\* \* \*

Ամիսներ վերջ, այդ պզտիկ չարածձի լաթին կտորը, պատճառ եղաւ, որպէս զի բռնուիմ իրեն : Այդ իրիկունը տունը սովորելէ, մէկ երկու օր առջեւէն անցնելէ, նախ աչքով, յետոյ նոյն իսկ տեսակցութեան մը համակրութեան և սէր մը ամբասցնելէ վերջ օր մ'ալ եղաւ որ, ես Սիրարփիինը եղայ և Սիրարփի իմին :

Ամէն անգամ որ պատեհութիւն կուենանա-  
ցինք քեթ-ա-քեթ տեսակցելու իրենց պարտէ-  
զին անկիւնը՝ այն թաշկինակը ձեռքը կը  
բռնէր, յարգելու համար իր համր ալ պեր-  
ճախօս միջնորդութիւնը մեր սիրային յարա-  
բերութեան:

Ո՞ր թուշուր մէկ ոստի վրայ կը կենայ,  
և ո՞ր երիտասարդն է որ մէկ սիրով մէկ հո-  
գիով կը գոհանայ:

Մինչ Սիրարփին հետ կը շարունակէինք  
մեր երիտասարդական վառ յարաբերութիւն-  
ները, անդին ուրիշ հորեհ մը ծայր տուաւ:

Սիրային տեխնիկաները միայն երիտա-  
սարդներու կողմէ չեն որ կուգան, երբեմն  
գեղաշնորհ օրիորդներն ալ իրենց անզուսպ  
սէրէն մղեալ առաջարկութիւններ կընեն, և  
պէտք է ըսել որ աշխարհիս վրայ օրիորդի  
մը բերնէն «քեզ կը սիրեմ» ը լսելուն չափ  
անուշ բան չիկայ, փորձառուները գիտնալու  
են այս պարագան:

Մեր բնական տան դրկից ընտանիքի մը  
քիչ մը անցուկ օրիորդը զիս կը սիրէ եղեր,  
չեմ գիտեր, սակայն իրիկուն մը երբ Սիրար-  
փիէն կը դառնայի կէս գիշերուան մօտ, դը-  
րացուհիս թեւերը կուրծքին վրայ խաչածե-  
կեցած էր իրենց դրանը սեմին վրայ ու մինչ  
բանալին գրպանէս հանելով բանալ կուզէի  
դուռը, ձայնեց՝

— Միւսիւ երուանդ քիչ մը հոս կու-  
գաս ...

Ապուշ ըլլալու է մարդ, որ այդ կոչին  
չի պատասխանէ:

— Ինչու չէ օրիորդ, անակնկալ բան մը  
ունիք, հիւսնդ կայ ... ըսի շուարած:

— Չէ, հիւսնդ միւսնդ չունինք, հի-  
ւանդը ես եմ քի ամիսներէ պէրի է ախրդ  
վախըդ կուլամ կոր ...

— Ներեցէք օրիորդ, չի կրցի բան մը  
հասկնալ ձեր այդ կցկտուր խօսքերէն, այս-  
ինքն ...

— Տահա նասը՛ ըսեմ, կէս գիշերին, աս  
այազին քեզի պէքէյօղ մը ինչ ըսել կրնայ  
ուզէր ... Ախ երուանդ, դուն ինծի պի-  
տի մեղքունես, էօլիւմիս սէպէպ պիտի ը-  
լաս ...

Դռնիկ, այլ բռուն սիրոյ մը խոստովա-

նութիւնն էր օրիորդին ըրածը, որուն հան-  
դէպ անտարբեր մնալու չափ աւանակ չէի:

Ու երբ գիշերուան մութին մէջ մեղմ  
այլ բռուն համբոյրներու շարժումքէն գի-  
նովցած փռուած ինկած էինք քանարէին  
վրայ, իրենց բակին մէջ, պահ մը մոռցայ  
Սիրարփին:

\* \* \*

Կասկածներ կան՝ որոնք շատ բան երե-  
ւան կը հանեն սիրային խնդիրներու մէջ:

Բաւական ամիսներ մէկ թեւի տակ երկու  
ձմեռուկ կրելէ վերջ դեռ չէի կրցած որոշել  
թէ՝ որը՝ անուշ էր և որը՝ ուտուելիք:

Սիրարփին սէրս էր իսկ Չարուկ ... սերս:

Սատանային համար կըսեն թէ երբ սիրաբ-  
նեղանայ՝ կանացի սրտերը կը հրահրէ և ա-  
նոնցմէ դուրս եկող բոցերը դիտելով կը  
զուարճանայ, բոցեր՝ որոնց մէջ քանի քանի  
երիտասարդներու հոգիներ կը հալին:

Երկու շաբաթի չափ այնպէս մը եղաւ որ  
չի կարենամ այցելել Սիրարփին. ինչո՞ւ, ես  
ալ չեմ գիտեր:

Խեղճ աղջիկը, կարծելով թէ լքած, ձը-  
գած եմ զինքը, մեր առաջին հանդիպումին  
յիշատակը եղող պօռտէ թաշկինակին հաշտա-  
բար միջնորդութեան դիմել մտածեմ է:

Իրիկուն մը ժամը գիշերուան չորսին մօտ,  
երբ Չարուհին հետ, օգտուելով անեցիկե-  
րուն կանուխ քնանալէն՝ քով քովի նստած  
մեր ապագայ երջանկութեան վրայ կը խօսէ-  
ինք ու ես պահ մը անփորձ սէրէս գինովցած,  
զինքը և միայն զինքը սիրելուս երգումնե-  
րուն և խոստումներուն մէջ անոր վստահու-  
թիւնը շահիլ կը ջանայի, յանկարծ դուռը  
զարնուեցաւ:

Երիտասարդ ջրհանկիր մը պզտիկ ծրարիկ  
մը ձեռքը բռնած դրան սեմին վրայ երեւաց,  
մինչ ես վախէս քանարէին ետին պահուը-  
տած էի:

— Միւսիւ երուանդին տունը ա՞ս է:

— Ինչ կայ, ինչ պիտի ընես ... հար-  
ցուց Չարուհի կանացի հետաքրքրութեամբ  
մը հասկնալ ուզելով, կրակի գաւկին՝ գա-  
լըստեան պատճառը:

— Հիչ, սա բաքէթը իրեն պիտի տայի  
սէ ...

— Էյ ինծի տուր գայ նէ կուտամ...  
ըսելով առաւ ծրարիկը, ուրկէ դուրս եկող  
զգլխիչ ցելիգիին բուրումը անմիջապէս յիշել  
տուաւ ինձ Սիրարիին:

Զարուհի առանց բառ մը արտասանելու,  
կէս վառ լամբարին մօտենալով՝ բացաւ, ու  
բուն մէջէն պզտիկ պատմական թաշկինակէն  
զատ երկտող մ'ալ կար:

« Երուանդ,

« Երկու շաբաթ ի վեր չգալուդ համար  
չէ որ կը գրեմ, այլ քեզ կը դարձնեմ այն՝  
զոր գեցնէն զսար, որպէս զի տրոջը սրբին  
բարձրութեան չի հասնելուդ համար քափած  
արցունքներդ անով սրբես »:

Քուկդ  
Սիրարի:

— Երկու աշկդ քէօնայ ճանաւար...  
ինչ պաշխասին ալ հէ՛...:

\* \* \*

Սիրարիին մոռցած էի ալ, իսկ Զարու-  
հիէն հեռանալու համար շաբաթ մը վերջ  
տունէն կրուեցանք:

ՔՕՊՈՒՍ.

## ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՅՔ

Արդի Հայերէնի լաւագոյն առաջնորդները

1. — Տարրական Քերականութիւն արդի  
Հայերէնի, նոր ոճով . . . . . 2 զրուշ.
2. — Լրացուցիչ (Տարրական կարգերու  
շահեկան գիրք) . . . . . 3 զրուշ.
3. — Նոր Քերականութիւն (գործնական  
եւ տեսական) . . . . . 4 զրուշ.

Ամէն ուսուցիչ այս գիրքերով կրնայ դաս  
տալ. — ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ ԱՆՎՐԷՊ Է:

Դիմել՝ 47 Պապր-Ալի հասկի, որ կեդ-  
րոնատեղին է Դաւթեան հրատարակութիւն-  
ներուն:

## ԳԼԽՈՒՍ ԵԿԱԾԸ

Պանդոկապետները յաճախորդ կը փնտը-  
ռէին, Դերասանները Աստուած Աստուած կը  
պողային, պարկեճ կիները բազմոցին ան-  
կիւնը նստած փողոցը կը դիտէին, և յօգուա-  
ծագիրներն ալ՝ նիւթի սով կը կրէին:

Ասոնց ամէնուն ալ գոհացում տուողը  
առջի շաբթուան մշուշը եղաւ:

Բարեկենդանի յաջորդ իրիկունով մշուշ  
մը ոչ խելքէ կ'անցնէր ոչ մտքէ և ոչ ալ  
նիւթական ո եւ է գոհողութիւնով մը կարելի  
կ'ըլլայ ձեռք անցնել:

Արդեօք ասանկ շաբթու քանի՞ երիտա-  
սարդներ և նոյն իսկ ամուսնացեալներ փա-  
փաքեցան Բերա անցնիլ, և սակայն չ'էին  
կրցած առիթ մը ստեղծել:

Շատ անգամներ երբ խօսքի գայ « մենք  
Սկիւտար կը նստինք »՝ ըսելով՝ նախա կ'ը-  
նենք, բայց սա երկուշաբթի օրուան մշուշը  
պատճառ եղաւ որ անգամ մը գոնէ Դուա-  
դաբուցիներ ըլլալ փափաքէինք:

Մէկ կողմանէ թէեւ կ'ուզէի ինչալ տուն՝  
առջի գիշերուան քնադութիւնս անցնելու  
համար, միւս կողմանէ ալ պզտիկ վիվլուկ  
մը ինչաւ ներսիդիս՝ բարեկենդան չ'ինելու,  
ու վախնալով որ մի գուցէ չոգենաւ մը գայ  
ու մեզ գլուղ փոխադրէ, անմիջապէս կա-  
մուրջը անցնելով՝ շունչս առի շիտակ Բերա:

Հոս կը դառնամ Սկիւտարցի, հոն կը դառ-  
նամ նորէն Սկիւտարցի, անանկ որ պահ մը  
ինքզինքս Սկիւտար կարծելով՝ ճաշարանէն  
ճամբայ ելայ տունս երթալու համար:

Խմած գինիիս ազդեցութեան տակ գլուխս  
կրակներուն մէջը, ոտքերս ալ իրարու մէջ  
անցնելով՝ կը քալէի, մէյ մըն ալ « այս գի-  
շեր ո՛ւր պիտի անցնենք » պօռաց մէկը քովէս:  
Աչքերս վեր առի՝ կրկին Սկիւտարցի մը-  
տերիմ մը:

Իսկոյն ինքզինքիս գալով՝ ձեռք ձեռքի  
տուէնք ու սկսանք բոլոր պանդոկները պը-  
տըտիլ կէս գիշերէն յետոյ գոնէ պառկելիք  
տեղ մը գտնելու համար, և ամէն տեղէ ալ  
« սենեակ չկայ » պատասխանը տրուեցաւ  
մեզի:

— Ինծի նայէ ըսաւ յանկարծ բարեկամս,  
եղաւ ըլլալիքը եկուր Պալօ մը երթանք:

Իւզիւմ իւզիւմ պագաւագ գաւառը կըսէ առածը, ես ալ արդէն չալմասան օյնար, հիանալի գտայ ըրած գիւտը ու վախնալով որ վերջը անօրինակ բազմութեան շնորհիւ տոմակները կ'սպառին ու մենք ալ մէջտեղը մնալով՝ կը զրկուինք ընտանեկան ? ատանկ չքեղ երեկոյթէ մը, առանց ժամանակ կորսնցնելու՝ գացինք տոմակնիս գնելու :

Աստուած իմ, պալօ մը՝ որ ամբողջ Թաթաւլա կը հոտէր կոր :

Հոն կը տեսնեմ բոլոր պատուաւոր պիւնքերը, ամուրիները, ամուսնացողները, փեսաներու տէրերը, կնիկներն ձգողները, և նոյն իսկ չորս անգամ ամուսնացողները, որոնք՝ առանց քաշուելու կատուի ձագերու պէս մէյմէկ տամաներ խածած կը խաղային :

Կամաց կամաց քունս կուգայ, այս բանը արգիւելու համար կ'իջնեմ վար՝ մատմազելի մը հետ բռնքա մը դառնալու :

Եւ որովհետեւ առաջուց կաղմակերպուած գործ մը չ'էր, այդ օրն ալ օդը քիչ մը խոնաւ ըլլալուն՝ զոյգը երկու օխանոց չիք ? Կօշիկներս հագած էի :

Թեւս երկնցուցի Օրիորդի մը՝ որ հազար աղաչանքներով վերջապէս հաճեցաւ հետս անգամ մը պարել, ու հազիւ թէ երկու անգամ դառցանք՝ քալի այագլառիմա պասիյօսսուն ընելով քովէս կծիկը դրաւ :

Այդ չիք Կօշիկներովս ոտքերուն վրայ կոխած էի :

Ըրած հնախօսքն երբէք չի վհատեցայ . — Ինչու որ այդ տեղակ խնդիրներու մէջ վհատելու պէս ապուշութիւն մը կարելի չ'է երեւակայել — ու շնորհիւ տամաներուն առատութեան՝ ուրիշ մը ձեռք անցուցի :

Աս ալ բախտէս լեզու չէր գիտեր, ուստի ստիպուեցայ իշմարով խօսիլ հետը :

Քիչ մը պարեցինք, քիչ մը պտըտեցանք, սանկ աղւոր ես, նանկ հիանալի, պալօին մէջ մէկ հատիկ ես ըսի, կոտորտուեցաւ, չիկնեցաւ, խաչելու պէս բաներ մը ըրաւ :

Քաղաքավար աղջկան գործն ալ ուրիշ է ըսի ինքնիրենս ու Բեյմս եկաւ :

Քովի պուսաբիկն երթա՞նք, ըսի իշմարով :

Հաւանեցաւ, ու գլխարկս առնելով մեկնեցանք սրահէն :

Ճամբան ուրախութիւնս չափ չունէր,

քթին երկու հատ կուտամ ու խէրը կանիծեմ կ'ըսէի :

Խանութէն ներս մտնելուս կրած տպաւորութիւնս մէյ մը ես մէյ մըն ալ Աստուած գիտէ :

Չորս կողմս Սկիւտարցի ծանօթներ նշուած էին, որոնք՝ մեզի սիւզմիւս ըրին :

Եղածը եղած էր, ի՞նչ կրնայի ընել, յանցանքը խմինս չ'էր ես :

Վերի յարկը կ'ելլենք ու սեղանի մը առջեւ կը նստինք :

Ձեռքի շարժումով մը գարեջուր ուղելը կը հասկցնէ մեր ազնուունի տամը, նոյն պահուն կը դիտեմ որ կառսօնները կը մարտնչեն խնդալէն :

Գաւաթները իրարու կը յաջորդեն ու պահ մը շնորհալի տամս պիտանի պէտք մը գոհացնելու համար կը դիմէ հոն՝ որուն դռանը վրայ W. C. մարքան դրուած է :

Հինգ վայրկեան կ'անցնի չի գար, տասը վայրկեան, քառորդ մը, մէջտեղը մարդ չկայ, թօհաֆ կ'ըսեմ, արդեօք սանձի կ'ընէ կոր խեղճը ու ետի դառնալուս կը նայիմ որ նորէն մարդիկ կը խնդային :

Բարկութենէս ինքզինքս ուտեմ պիտի :

Յօնքերուս accent circonflexeի ձեւ մը տալով՝ քովս կը կանչեմ անոնցմէ մէկը ու խնդալուն պատճառը հարցնելուս՝

— Պարո՞ն, կ'ըսէ, խաբուէր էք, այդ ձեռք քովինը պատճառաւ մը կծիկը դրաւ, ինչու որ անիկա կնկան հագուստի տակ էրիկ մարդու ամբողջութիւն մըն է . . . :

— Ի՞նչպէս, էրիկ մարդ մի՞ . . . միթէ կարելի է . . .

— Հը՞ . . . հէմ 50նոց էրիկ մարդ մը . . . :

Իշմարով խօսիլը հաստատ ապացոյց մը կը նկատեմ այդպէս ըլլալուն ու հաշիւը մաքրելով ճամբայ կ'ելլեմ դէպի պարահանդէս :

Անմիջապէս կերթամ կը գտնեմ բարեկամս, որ նոյն պահուն կնկան մը թաթիկները համբուրելու զբաղած էր, ու խնդիրը կը պարզեմ, որպէս զի անիկա ալ ինձի պէս տէրի չի գայ :

— Հայտէ՛, կ'ըսէ անիկա կապոյտ աչքերը խոշոր խոշոր բանալով, մեզի խուլումնի կ'ըսեն, քեզի պէս հնայի չենք :

Իրաւոնք տալէ զատ բան մը չեմ կրնար ընել :

Մէյ մը վար մէյ մը վեր կ'սկսիմ պտըտկիլ, եղածը աչքիս առջիւնը բերելով ու կերպով մը չեմ կրնար հաշտեցնել խելքիս հետ :

Եւ որովհետեւ ժամանակը անցնելու վերայ էր, տաժանները իյնալիք տեղ կը փրնտուէին կոր :

Երկայնահասակ, շատ աղուոր հագուած Թօմպուլիկ տամա մը քովս մօտենալով՝

— Շատ հաճոյակատար եմ, ըսաւ հայերէն լեզուով, եթէ կ'ուզես ...

— Ինծի նայէ քուզում, ըսի հայրական լուրջ թոնով մը, անգամ մը խազըխի եկայ, տակաւին մտքէս չէ ելած, ալ ասկէ վերջը ես ալ թովմաս առաքելիս պէս մինչեւ որ աչքովս չի տեսնեմ ու ձեռքովս չի շօշափեմ՝ չեմ հաւատար, պարապ տեղը զօռ մընէր :

— Զիւր ըսաւ ու մեկնեցաւ քովէս :

Ահա այդ գիշերուն գլխուս եկած փորձանքին մէկ մասը :

ՆԵՐՇԱՊՈՒ՜՜



## ԴԱՐԱԶԿԱՍԻԿ ԲԱՌԱՐԱՆ

Յորում բովանդակեալ պարունակեն բառֆ պիտանեցոյնք, առաւել քան 95,800,000.

Ի պէս ամենեցունց, ի մեծանց մինչ ցփոփունց, զարգացելոց եւ անգարգացելոց, լուսաւորելոց եւ ամենայն քոյ աւարածոց եւ ինձ բազմամեղիս ... :

Երկնեաց  
ՌՈՄԱՆՈՍ

Ամօք. — Սպառելու մօտ ապրանք մը :

Ամուսնութիւն. — Ըստ ոմանց յիմարանոց, ըստ այլոց՝ հիւանդանոց, ըստ բազմաց՝ յետ յիմամիտնից անկեղանոց, ըստ հոգունց՝ դըժոխք, վիշտ, լաց ու կոծ, ըստ սակաւաց՝ չարժեք տաանոց, ըստ հանուրց՝ բառ ինչ ա-

նիմանալի, անըմբռնելի, անբացատրելի, անճառելի, հետեւաբար այս բառին կատարեալ իմաստը հասկնալու համար անպատճառ պէտք է ամուսնանալ :

Աղօթք. — Ծերերուն միտքարանքը, քահանաներուն դրամազուխը իսկ մուրացիկներուն բերնին ծամոցը :

Արքայութիւն. — Տեսակը շատ տեղի մը անուն :

Արսասուք. — Պատրաստ հեղուկ մը որ ի պահանջել հարկին կը գործածուի :

Անառակութիւն. — Կնոջ քով պոռնկութիւն, էրիկ մարդոց քով սրկայութիւն, իսկ տղայոց քով չարածիւթութիւն :

Առաքիմութիւն. — Ունեցողներուն անունները արդէն Հիւանդանոցի օրացոյցին մէջ գրուած կան :

Ազնուականութիւն. — Բան մը որ դրամին հետ խնամութիւն ունի :

Անբարոյականութիւն. — Բարոյական քիչ գտնուելուն համար շատ անգամ անոր տեղ կը գործածուի :

Անպսուդ. — Կանանց քով ամուլութիւն, ծառերուն քով եապանիութիւն, իսկ տղայոց քով՝ լաց կոծ :

Աւանակ. — Տէրօջը հեծած կենդանին որ շատեր տէրերուն հաճելի ըլլալու համար կամովին ըլլալ յանձն կառնուն, հետեւաբար այս կենդանի. Եւային առաւելութիւնը անբազդատելի է ուրիշ կենդանիներու հետ :

Առողջութիւն. — Եթէ բժիշկներու հետ շատ կը տեսնուիս՝ երբէք չես ունենար, վասն զի բժշկութիւն և առողջութիւն իրարու հետ ի ծննդենէ խռով են :

Անպատուութիւն. — Բան մը որ ոմանց մահ կը պարգեւէ, ոմանց ալ վայելք և կեանք :

Անեհախնդրութիւն. — Խենդի խօսք :



# ԲՈՒՍԻՆ ԳԻՇԵՐԸ

Բարին Աստուած, իր անհուն բարիքներէն մաս մ'ալ անցեալ երկուշաբթի իրինկուն հանեց այն կարգ մը հին օրէնք քուսնթօշներուն, որոնք տարիներէ ի վեր Բերային և անոր գիշերային եռուղեւ կեանքին ախը կը քաշէին:

Այն կարգ մը ընտանիքի հայրերը, որոնք կին ըսուած արարածը իրենց խաբարմայը տուտուն, գիշերային դօստանքը՝ ճամղալը քիթինէն, ըմպելին՝ զիւր, թաւանելով սովորութիւն ունէին հաւերուն հետ կանուխէն քաշուիլ իրենց թառերը, ահա Բարեկենդանի էն տաք ու չէն չող Ըստըռիտեային իրիկունը ստիպուեցան Բերա մնալ և յիշել իրենց երիտասարդութեան օրերը և թռչող անուշ և զապտ օլունմալ կեանքը, երբ դեռ իրենց հայրիկ ըսող չկար, ոչ ալ շարխայի փարա տուր:

Նախախնամութիւնը երբեմն ինչ անո՛ւշ կատակներ կընէ, և ինչ անակնկալներով կը հրճուեցնէ էն թթու և կախ դէմքով մահ կանացուները:

Երկուշաբթի երեկոյեան թանձր մշուշ՝ սիւսքոյիներուն սիւսքոյիքը եղաւ անոնց համար՝ որոնք Պոլսոյ արուարձանները կը բնակէին, իսկ քիթէ բերնէ եկաւ պէտք է ըսել անոնց ալ, որոնց ընտանիքները նոյն օրը Պոլիս իջած ըլլալով՝ դեղին սենդէն աւելի պատուհաս մը եղան իրենց ամուսիններուն գլխուն:

Շատեր կը զարմանան և ոմանք կը հարցընեն թէ՛ ամէն շաբթու ո՛ւրկէ կը գտնամ նիւթերը ընդլայնելու համար: Աստուած ինչի կարող չէ, ահա անակնկալ բուս մը, որուն առթիւ տեսածս ու լսածս ի գիր առնելէն աւելի ճոխ և զուարճալի նիւթ կարելի է երեւակայել:

Կամուրջին վրայ հարս առնելու պատրաստ կառքերուն պէս՝ չողենաւները կարգաւ շարուած են օճ ֆուլ սթիմ, մինչ դուրսը ահագին բազմութիւն մը հաւերու պէս երկինք կը նային ինչպէս նաեւ բաց ծովուն,

որ նոյն ատեն ճերմակ մածունի պէս թանձր երեւոյթ մը առած է, և գտնուած նաւապետներուն մէջէն մէկը չի համարձակիր թրգալ շարժելու... ինչպէս կըսեն:

Իրիկունը սկառքիներս չի բերես նէ դուռը չեմ բանար ըսող կնոջ ամուսինէն մինչեւ ճիճի մամա հարսնուկին ժամ առաջ հասնելու լէօպէթները քաշող նոր փեսաները: Իրիկունը տաք կերակուր չունինք հետդ ծուկ մը բեր ըսող տանտիկնոջ էրիկմարդէն՝ մինչեւ Խօռօղունէն նոր քօսթիւմը թեւը զարկած հափթալը խճին: Վերջապէս նինէին էնֆիլէի մանտիլ առնողը, աղապային քէշէ թէպիկ գընողը, կնկանը ըզզակները ըռէհինէն հանողը, չօճոխին խաշած աճուկներուն թգալ բուռնասի հասցնողը, ծոցուոր կողակցին սալիւմը տասը զրուշի խաղող վազցնողը, ծիծմորը հինտիւթան ճէվիդիի հիւթ տանողը, երկու գիշեր շարունակ ամսականը պալօները ուտելով աման տուն իյնամ ըսողը, չուռուպի բօթթգալ պայուսակը լեցնողը, վերջապէս բոլոր տունի տեղի մարդիկ յապուշ կրթեալ կեցած են կամուրջին վրայ, սպասելով չողենաւին այն անուշ տուտութիւն՝ որ զիրենք Բանան պիտի առաջնորդէր:

Սակայն պարապ յոյս, Աստուած ուզեց որ այդ իրիկունը աղ պղպեղ մաղլըներն ալ օր տեսնան և փոխադարձաբար տունի կնիկներն ալ... հին բարեկամները:

Եւ որպէս զի մեր ընթերցողներուն քրքր-ջալիր ժամանց մը ըլլայ այս նիւթը, ուստի պիտի նկարագրեմ հոս ընտանիք մը, որոնք հակառակ իր ամուսնոյն «չըլլար միջնաքներուն» Պոլիս գացած երեկոյին էրկանը հանդիպած էր իր հասուկ աղջկանը հետ, և կարծեմ թէ գոհ պիտի մնաք եթէ հետեւեալ էջերը կարդալու ըլլաք:

\* \* \*

— Էյ թամամ... քա ձեզի չըսի՞ քի ատօր հաւան եալապուխ է միշնաք տէյի... հէ... հիմա ինչ խալթ պիտի ուտէք նայիմ, կըսէ Մէրկէլ աղան երբ ուշ ատեն կամուր-

Ղին վրայ կը հանդիպի իրեններուն, որոնք բաբէթներով ծանրաբեռնեալ՝ ապուշ ապուշ ծովին կը նայէին:

— Սուս եղիր սուս, եղաւ իշտէ, աս բիճը տեսա՞ր մի, իլլէ իշնանք ըսաւ, գլխուս միսը կերաւ ...

— Հիմա ալ քէօրբիւին վրայ մնացէք տէճիվերս կերէք քի երթաք սովորէք ...

— Կայնէ նայինք պէլքի կը բացուի ...

— Հիմա պիտի պացուի քի ասանկ անապապա կիւնիւ իս պէլային պիտի խօթէք ...

— Էյ ճանրմ, էօլիւմ չէ՞ր ես, չօգ չէ՞յ ... խննդ մանթարի պէս կեանքն բուսած չէինք ֆարազա, չորս թին խըսըմ ունինք, որին դուռը չալելու ըլլանք նէ, բուֆլա եաթախ չի ձգէր տէ առլինիս ալ թիւուիւ մանճա չի դնէր ...

— Քա ի՞նչ տեղը կար քի էքմէքճիի պէս ձեզի երկու թառաֆս քիւֆէ տէյի կախեմ պէ դուռ դուռ պտըտիմ գիշերով ...

— Հապա՞, հետ չըլլայինք քի մինաւո-րիկդ կուլիսէ ելլայիր ... սէնի ֆըլտըր կէօղ սէնի ... աս պանը Աստուած ըրաւ, աղէկ որ Աստուած ըրաւ, աղէկ քի ինչեր եմ տէ քէօրէկ մէմէսիի պէս խօլթուխիդ տիպէն աս-դին չպիտի գամ ... կըսէ տիկինը յաղթա-կան գիւտ մը ըրած ըլլալու յոխորտանքով:

— Աման տուտու կը սոսկամ կոր, էտեւէ կը մութնայ կոր, կը փսրտայ օրիորդը մօրը ալանջին:

— Սո՛ւս քա, լէպլէպիէն վախցող հար-սը մի դառնար գլխուս, լեռան պէս հարըդ հետեւնիս է ...

Ատենը բաւական ուշ ըլլալով չատեր յոյսերին կտրած՝ ոմանք Բերա, ոմանք ալ Պոլսոյ կողմը իրենց աղգականներուն երթալ կորոչեն, այնպէս որ քիչ ատենէն բազմու-թիւնը կը ցրուի:

— Էյ Մէրկէլ աղա՞ ... ի՞նչ պիտի ը-նենք ... ածապա երթամ խապտանին հար-ցունեմ քի պիտի ելլայ մի չէ տէյի ...

— Ի՞նչ կուզես նէ ան ըրէ, պանա օլտու օլաճագ ըսելով Մէրկէլ աղա բալթօին օձիքը վեր կառնէ կը կծկուի, մինչ տիկինը հոն կե-ցողի մը մօտենալով,

— Աֆ կընես, ինչ տար քի իրար չենք

ճանչնար նէ, ասանկ քէթթէյի լուս աղբար կը սեպուինք, ածապա վարօւր պիտի ելլա՞յ կըսես ...

— Ի՞նչ գիտնամ քուրուկ, մենք ալ անոր կը պէլէյէնք կոր ...

— Քա վախ կէօղիւմ ... հէլպէթ կար-գուկ ես ...

— Հապա՞ ...

— Հի՞ ... պէթէրէն պէթէրը կայ եղէր, մենք նէ իսէ բիւթինս ալ հոս ենք, ածապ հիմա տունը ինտո՞ր ֆէսֆէսէ կընին կոր ...

— Ֆէսֆէսէն ես կընեմ կոր քուրուկ, չիւնքիւ առտուն ձգեցի դուրս ելայ նէ կը-նիկըս ցաւ կը քաշէր կոր ...

— Վո՛ւյ մըսէր Աստուած ազատէ, պարէ դահեկնիդ վարպետ է ...

— Հա՞ ... ատ թառաֆէն չիւքէ չունիմ ամա, իշտէ մէռաք ...

— Քա վայ մեղքիս, քիսէնիւնով չփելու է, թամամ երկու սահաթ ֆառիս կընէ ...

Մերկէլ աղա, որ մօտը կեցած մտիկ կը-նէր, բարկութեամբ,

— Հայտէ՛ քա, հաւատքէ օրէնքէ մի հանէր ինծի տէ, սահաթ մը առաջ որին տու-նը պիտի երթանք նէ երթանք, զէրէ մուլթը պաճախները կախեց ...

— Քա մըսէր Մէրկէլ աղա, կընիկը ցաւ կը քաշէ կոր եղէր, իմացայ նէ գիտես քի սիրտէս բան մը վար քաշեցին ...

— Էօլիւշիւն քէօրին ... ամէն մարդ մուկի խաբան մը կտնայ տէ աս գիշեր կը-լովը մէջը խօթէ տէ չապալանմիշ կըլլայ կոր, դուն իսէ դահեկութան ես ելէր ... հայտէ բէշէնիդ ժողվեցէք տէ վեր ելլանք նայինք ուր սըղընմիշ կընանք ըլլար կըսէ ու բողբոջ մէկ Ղալաթիոյ կողմը կուղղուին:

Ճամբան ուրիշ կարգ մը մնացողներու կը հանդիպին, որոնք բաշա բաշա կախ դիմօք Բերա կելլային թէյզէի, հալայի չեմ գիտեր քանիբերորդ պորոնի մը տունը պատապար-ուելու համար, որոնց մէջէն տաքօ ալա Գուլե-գաբու տիկին մը թէք գլուխ իրենց կը մօ-տենայ,

— Աֆ կընէք, որչափ չեմ ճաննար նէ, ֆախաթ ասանկ իրիկուն ամենքս քուր աղ-բոր պէս ենք, կլխաւորիս մայասըը կատ-

խեցաւ տէ իշնամ քէօքծիէն թող առնեմ ըսի եկայ քի բուսը կոխեր է ...

— Հրամանքդ ո՞վ կըսուիս, գիտես քի ճաշնամ պիտի կըսէ տիկին Սրբուհի, պահ մը կենալով ...

— Պէլքի ըսեմ նէ կը ճաշնաս, խալի ուս-  
տասի Մանիէլ աղան կար վախտով քի անոր  
մէկ տղան մաքինային տիպը մնաց նէ, մէկ  
աղբարն ալ ուն ֆապոթիքսին չէթէլէծի էր,  
իշտէ անոր տալը կար, սա ո՛ւր է աաքրօջը  
հետ արանսըզ պոնուեցաւ եիւքը, գիտնալու  
ես, իշտէ անոր թէյզէին թողը Թագուկին  
չի նշանեցին հերու ... իշտէ ես ալ անոր  
աաքրօջը տալն եմ ...

— Կայնէ նայիմ բէք տօլաշըխը ըսիր  
ամա նէ իսէ, էյ հիմա ո՛ւր պիտի երթաս ...

— Զիյտեմ քի ո՛ւր երթամ, աս թառաֆ-  
նեքը հալայի թող մը ունենալու եսք, ողոր-  
մած հոգի կեսուրս անանկ կըսէր ...

— Էյ աս վախիդ նասըլ պիտի գտնա՞ս  
քուրուկ, ատ ի՞նչ միւշկիւլ բան եղէր է քի  
դուն միս մինաւորիկ հոս ես մնացէր, իրաւ  
քի մենք ալ մնացինք ամա, էյ ապրի կըլ-  
խաւորս, աղջիկս հետ եմ ...

— Հա՛ ... աղջիկդ է ... Աստուած պա-  
հէ, Աստուած բարի խօսէթ տա ...

— Խայըրը աղօթքովդ ... էյ քիտես  
քի ինծի ալ տէրտ տուիր աղջիկ, աճապա ...

— Տահա պէքէյէնք, կը ճայնէ Մէրկէլ  
աղան, որ հոն կեցած մտիկ կընէր խօսակ-  
ցութիւնը ...

— Քա ճանճմ, կընիկը օռթան է մնացէր  
կիւնահ է ...

— Աֆ կընես, տեսայ տէ միտքս ինկաւ  
կը յարէ օտարուհին, աղջիկդ աղէկ ուզող  
մը ըլլայ նէ կուտամ ...

— Ինչո՞ւ չէ, սալամուռան դնելու չեմ  
եա ... կուտամ ...

— Էյ անանկ է նէ աղէկ ըռաստ եկանք,  
խումբիներու կտօր տղայ մը կայ, ինքիր  
կլխուն գործ ընող ...

— Հայտէ քա՛, հիմա պոռամ պիտի կը  
կըրկնէ ամուսինը սրտնեղած ...

— Էկուր Մէրկէլ աղա, աղեկութիւնն ալ  
Աստուծմէ կուգայ չարն ալ ... աղջիկնուս  
խօսէթը ելաւ, մէյէր ասանկ աչկ աչկի բոռս  
ըլլայ պիտի եղէր քի, մերինին խօսէթը  
պացուի ...

— Մերինին խօսէթը պացուելուն, հա-  
վան պացուէր տէ տուն իյնայինք նէ տահա  
աղէկ կըլար, քիթս մըզըր մըզըր կուգայ  
կոր ...

— Էկուր ճանճմ, մատամը քեզի բռէ-  
զանթէ ընեմ, բէք անուշիկ կէնճ մը կերե-  
ւայ կոր, պիր կէօրիւշ սիրտիս մէջը դրին  
գիտես քի ...

Մէրկէլ աղա, կնոջը մօտենալով ականջին,

— Ի՞նչ կը բանիս կոր քա, կնիկը իյնա-  
լու տեղ կը փնտռէ կոր, ի՞նչ տէյի մօտութիւն  
կը ցուցունես կոր, տիւլպիւնի պէս քովէս  
կախելու չեմ ... վազ անցիր ...

— Հա ամա՛, կնիկը աղջկանս բարի խըս-  
մէթ է կըտէր ...

— Եալմա՛, եալմա քա՛, տիւլպէկ խա-  
ֆալը, խուռնաղութին ընէ քի հետերնիս  
փակչի տէյի, չեմ հասկնար կոր, աղջիկնուս  
խօսէթը հէմէն բուսին իրիկունը օռթան ե-  
լաւ ...

— Ամա՛ն դուն ալ, ի՞նչ զարար ունի,  
թող երթայ հետերնիս գայ, խեք է ...

— Եաքը բիւշման չըլլա՞ս, կուգես նէ  
չըմէնտըֆէտի պէս ըռաստ եկածը պոչերնուդ  
կապեցէք, առջեւի մաքինան ես չեմ մի, տա-  
րածիս խըտար կը քաշեմ, ամա ասոր խա-  
զան ալ կայ ...

— Բան մըն ալ չիգայ, դուն սիրտդ բէք  
բռնէ, հէրիք է քի ես հետդ եմ ... ըսելով  
կնոջը կը դառնայ ինծի նայէ քուրուկ, ա-  
նունդ ալ չիյտեմ ամա ...

— Զիւլֆիւեար ...

— Ի՞նչ ալ աղուոր անուն է, էկէր թէ-  
նէզիւլ կընես նէ աս գիշեր մեղի հետ ան-  
ցուր տիրո լուսնայ նէ, նայինք ի՞նչ կընենք ...

— Աղէկ, շնորհակալ եմ ամա ... (յոն-  
քերովը և աչքերովը Մէրկէլ աղան ցոյց տա-  
լով) ...

— Քա չէ՛ ... էրիկս է ամա ես անանկ,  
խսխանճութիւն ֆալան չունիմ, չիւնքիւ ա-  
ղէկ մը թառթած եմ ...

— Հրամանքդ անանկ կըսես ամա, ելլայ  
կլխաւորս իմանայ նէ ...

— Տէր ողորմեայ, ես հետ չեմ ... Ի-  
րաւցունէ ամէլլիխի հապի պէս քեզ կըլելու  
չէր, ինչ տար ըլլայ նէ, մենք կտորը կէնէ  
կլխաւորիդ կը մնայ ... կըսէ խնդալով ու

այսպէս բոլորը մէկ Ղալաթիա ոտք կը կոխեն:

Այդ իրիկունը Ղալաթիայէն մինչեւ Բերայի շիտակը տարածուած բազմութիւնը կը կազմէին շողենաւ չի բանելուն համար մնացողները, այնպէս որ չատ մը ծանօթներ իրար գտած ըլլալով՝ տասը տարուան օրդողածներն անգամ հաշտուած էին կարելի է, բայց մենք չարունակենք մեր պատմութիւնը: Թիւնէին մէջ:

— Երկու աշուրնին քէօռնայ քի խօճա տեղը ձգեր են տէ կիրկս կեկան կոր քա... վայ մէղքիս ... կըսէ տիկին Սրբուհի լեռան պէս ոտքի վրայ կեցող գլխարկաւորին ...

— Բառտո՞ն ...

— Աղէկ քի բառտոն մը սովորեր էք ... կէօզ կէօրէ օյին ելլալ կուգէ կոր ան է, սըտեղը բիւրձ մը չիյնայ եանի, սամսարի պէս կը կղեն ...

— Էյ երեսիդ ըսել չըլլայ ամա կէօստէրիչի ես, Աստուած պահէ ... խօսք կառնէ հիւր տիկինը՝ Զիւլֆիւեար ...

— Ը՛նչ ... վրայէս ի՞նչ պէլլի է քի, օր մը իս պաղնիքը տեսնալու ես քի նայէ պերանդ վրայ կուգայ մեթ ընելով, ամա ի՞նչ ֆայտա, մարդուս օռթը սատկած է ...

— Էյ ժըսէր, տալանի պէս մարդ է նէ, իմինիս պէս տիպը դուրս չէպէկ մը չէ ես...

Նոյն միջոցին օրիորդը մօրը ականջին.

— Մայրիկ, մոս մոռ ըրին պաճախներս, ինչտար ծան ունիմ նէ պիտի պոռամ ...

— Բա տիխաթ ըրէ, պէքեար խանի պէս է հոս, պիւլպիւլ չըլլայ ...

— Նասըլ պիւլպիւլ տուտու, հէրիֆը վիրայ մութ տեղը ծառք կը պանեցունէ կոր...

— Աստի թառաֆօ անցիր քա... քէօռնա աշուրնին, ըսելով հազիւ տեղ պիտի փոխէին՝ արդէն կը հասնին և դուռները բացուելով դուրս կեկան:

— Բա ա՛ս ինչ է, կընիկ էրիկմարդ սօխալին են, ժամէն կեկան կոր գիտես քի զարգարդարի իրիկունով ... կըսէ տիկին Սրբուհի և զարմացմամբ չորս դին կը նայի:

— Սէյրի չեկանք կընիկ, ատրմ նեաէ տէ սահաթ մը առաջ ուր պիտի երթանք նէ երթանք, կըսէ Մէրկէլ աղա, տանը համար առած քսան նարինջներուն ծրարը մէկ ձեռքէն միւսը անցնելով:

— Ամա՛ն դուն ալ, աս ալ ասանկ իրինկուն մըն է, թող տուր ֆէռահնամ քիչ մը եղաւ ըլլալիք, նշանած չեմ քի, ետ կընէ տէյի հոգ ընեմ ...

— Նշանած չեա ամա, քսան տարուան կարդուածները պիլէ ձգել կուտայ աս Պէյօրլուն, էլ օղլուն, գիտցած եղիր կընիկ, ոտքդ տէնկ առ ...

— Աշկիս մէջը կը նայիս կոր ... ախրդանմիշ եղած պէկիրի պէս, ինծի կուգայ քի օռթալը կար կանանչ տեսար նէ քիչնէ միշ ընել պաշլայեցիր ... ամա քէօստէկք ծառքս է ...

— Տէ՛ ... կարճ կապէ ...

— Զիյտեմ ալթըխ, ես ըսեմ տէ ետքը օռթա օյինի չեկանք, գէրէ հոս տունը չենք քի բերանները քաչեմ, նայէ խառնճաի պէս ինսան խայնամիշ կըլլայ կոր ...

— Տուտու ներսիդիս սօղլուճանները պէրանս կուգան կոր անթութենէս ... կըսէ օրիորդը, որուն չառխի ֆէլէկ սուռաթը չը նայելով անցնող մը չիկար:

— Կայնէ նայինք աղջիկ ուր պիտի քաչէ մեզ, ես ալ անանկ ...

Այսպէս կուրտելով կը կուրտելով մինչ կը յառաջանային, յանկարծ կանգ կառնեն ընտանիքի մը մօտ, որոնք ծանօթ էին և թէ գեղացի:

— Բա՛ ...

— Բա՛ ...

— Էյ աս խըյախ բան է ... դժժալ մաշուչին համար մնացիք ...

— Հէ՛ ... հա՛ իշտէ բուսին համար վաքօռ չի բանեցաւ քի դիմաց ասնէինք ...

— Էյ հիմա՞ ... ո՛ւր կերթաք կոր, մենք ըսես նէ շաշըրմիշ ըրած հաւերն ենք դառցէր, հէմ ալ էրիկմարդ չունինք ...

— Էյ ֆարազա եապանճի՛ էք ... իշտէ Մէրկէլ աղան էրիկմարդ, մեզի հետ եկէք, մենք ո՛ւր դուք ալ հոն ... մեղայ ... թէքլիֆ ունինք ...

Մէրկէլ աղա, որուն արեւնը ջուր կտրած էր, ալ բարկութենէն կնոջը կը մօտենայ,

— Կընի՛կ, մաքինան աստար չի կրնար սիւրիւքլէմիշ ընէր ... եօխուչին վրայ ետ ետ պիտի կոխեմ ...

— Սո՛ւս, ամօթ է կիմանան, մեղաց, սօխալին օռթան մնալու չէին ...

— Քա քեզի ո՞վ ըսաւ քի Մէրկէլը մաշան ծառքը քիւֆէն կռնակը բաշտովածիի պէս սօխախ սօխախ կը պտըտի կոր տէյի, խելքի՞դ եկաւ ...

— Էյ ճանր՛մ, իրաւցունէ օմուզնիս ելլալու չէին, լան սօխախ, թող երթան քովերնուս ի վեր քալեն, դուն ալ մեզ մուխայէթ կըլլաս առջեւէն ...

— Քա ես քէօսէմէն եմ, կերած խալթերնին նայէ ...

Տիկին Սրբուհի, առանց մտիկ ընելու ամուսնոյն դիտողութիւններուն, իր նոր տեսած հիւրերուն կը դառնայ ու կսկսի չարուհեակել խօսակցութիւնը,

— Էյ աս խըյախ փախաւ, Զապէլս, դո՛ւք ինչու համար ինչէր էիք աս օր ...

— Ինչ գիտնամ մենծ մաղազա մը լէքէի թաս է ինչ է, անանկ բան մը կընէ կոր ըսին, ինչանք տէ ուֆախ թէֆէխ չտկենք ըսինք, մնացինք ...

— Լիթիթասիօն պիտի ըլլայ, կըսէ տիկին Զիւլֆիւհար, որուն գլխարկին կապուածքէն յայտնի էր թէ այդ բառը գիտէր արդէն:

— Ա՜ֆ կընէք, տիկինը չեմ ճաշնար կոր կըսէ տիկին Զապէլ:

— Ան ալ զավալլըն, էրկանը մայասըը պոմիշ է եղէր տէյի քէօքճիւին ինչեր է, իշտէ մնացէր է մեզի պէս ...

— Վա՛խ վա՛խ վա՛խ ... նէ իսէ աղէկ քի իրար գտանք, բարի իրինկուն Մէրկէլ աղա՛ ... նութիւղ պոնուէր է քուկին ալ, հախ ունիս, չօլուս չօճօխով աս վախիթ սօխախները ...

— Ասծու բարին ...

— Հիւանդ ես ինչ ես, կուզես նէ սա շալը կլոխդ առ, գէրէ մըզըր մըզըր կիշնայ կոր շուշուշը ...

— Զարար չունի, բան մը կիշնայ կոր, ես ալ կիմանամ կո՞ր ամա, չիյտեմ քի շուշուշ է մի մաշուշ է ...

— Աման բէք թօնաֆ կը զուրցես, հոս պիլէ նէքուէութիւնդ տեղն է ...

— Քա ճանր՛մ աս ասանկ չըլլար, տեղ մը նստինք տէ փորերնիս կշտացունենք կըսէ տիկին Սրբուհի ամուսնոյն ...

— Քէօռ Արթիւնին ֆուռունէն պաշխա տեղ չենք կրնար երթար կընիկ, մեծ հարըս

ինծի վասիյէթ չըրաւ քի բուսին գիշերները էլ ալէմին գիյաֆէթ քաշեմ տէյի, բէշերնին թող վեր առնեն տէ, առջինին կախուածքէի մէմէսի պէս ճերմակ ճէպերնին ինչ կայ նէ օռթան թող հանէն, ես երթալիք տեղս գիտեմ ... չէնէ սըւոնք տէֆ ըրէ ...

— Սօխախը կը մնամ, ատ պանը չեմ ընէր ...

— Թափառական Հրեայ կարդացե՛ր ես հրամանքդ ... ԲԱԼԷ՛ ... ԲԱԼԷ՛ ... պիբ տիւղ ԲԱԼԷ՛ ...:

## ԼԻԼԱ

Յ. Գ. — Յաջորդ թիւով պիտի ամբողջացնենք այս յոյժ հետաքրքրաշարժ իրական պատմութիւնը, և պիտի նկարագրենք թէ ինչպէս ուրիշ շատ մը ընտանիքներ և երիտասարդներ միանալով իրենց, խեղճ Մէրկէլ աղայէն կերան խմեցին, և բարկութենէն ամուսնու ընդմէջէն իրենց խեղճ մարդուն քիթէն:

Ուրեմն ութ օր եւս և պիտի կարդաք:

ՆՈՅՆ



## ՇՆՈՐՀԱԽՈՐԱԿԱՆ

Ինչպէս թերթերը ծանուցին օրը օրին, Եւտի-գուլէի Ս. Փրկչի հիւանդանոցին ներքին բժշկապետ անուանուած է ծանօթ Տօքթ. Դաւիթեան էֆէնտի, որուն ձեռնահասութիւնը և արհեստին մէջ ունեցած փորձառութիւնը ամէն գովեստէ վեր է պէտք է ըսել:

Տօքթ. Դաւիթեան էֆէնտի պէս կարող և վստահելի բժիշկի մը անուանումը այդ կարեւոր պաշտօնին, անգամ մը եւս կապահովէ Հիւանդանոցի բարւօք և գովելի վիճակը:

Իերայի՝ ինչպէս նաեւ Մայրաքաղաքիս բոլոր արուարձաններէն փնտռուած յիշեալ Տօքթօրը իր արուեստին ամէն նորութիւններուն ծանօթ և գիտակ, կը շնորհաւորէ արդ. Համբազիսալ:



## ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ



### ՄՐԱՄԻՏ ԶՐՕՍԱՆՔ

#### ԼՈՒԾՈՒՄ

Մեր նախորդ մտքի զրօսանքի լուծումը որ էր՝

#### ԼՈՒՍԱՆԿԱՐ

Ճիշդ գտած են՝ Օր. Նուարդ Դ. Պօղոսեան, Լուսաւորչեան Վարժարանէն և Տեարք Յարութիւն Սուլուխանեան՝ Պէշիկթաշէն, Գրիգոր Մինասեան Բերայէն։ Ասոնցմէ Տիար Յարութիւն Սուլուխանեան կատանայ մեր խոստացած Մէկ ՏԱՐԵԿԱՆ Հանրագիտակի հաւաքածուն։

Թէեւ բաղմամբիւ ստորագրութիւններ մեզ հասած էին այս հարցման առթիւ, որոնցմէ շատեր ԱՐՁԱՆ կամ ՓԲՈՑ գտած էին։

Անուն մըն եմ ես հասարակ,  
Մի՛ մեամեք երկար բարակ,  
Իմ ամբողջս յար միայնակ,  
Կուգան կազմել ջառեւ վեցեակ։  
Խոհացոցի առարկայ,  
Իսկ երկրորդ մասն իմ չորեքսառ,  
Յուսամ թէ Զեր տունն ալ կայ։  
Ոն կ'աղայնմ գիտ մի յուզեմ,  
Կրնամ փնտել ի վարժարան,  
Ուր միտս առողջ մանկունք խայտան։

Նիկոմիդիա.

Ա. Ս. 2.

Սոյն սրամիտ զրօսանքը առաջին անգամ՝ գտնողին վիճակաւ կը խոստանանք բոլորքալէ չիք կաղամարի մը կաղմածը, գնուած Տէր-Ներսէսեան ծանօթ թղթավաճառատունէն։

Արտօնատէր ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԴՐ. Ե. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապր-Ալի Գասէտի քիւ 52.

ԲԵՐԱ. — Քրէսի Ֆօնսիէի անուշ մէկ կատակին բերմամբ, բաւական գումար մը ձեռք ձգող միւսիւէն կը խնդրուի որպէս զի, երկնից եօթերորդ խաւերէն, աղջիկ խնդրելու համար երբ հայրիկը հոս հոն սալաորմիչ ընէ, ոտքին զոյգ մը լաստիկը չի խնայէ՝ ազատելու համար ծերուկը սանդուխներուն վրայ նստելով, ցեխոտ ոտնամանները հանելէ և բուրդ գուլպաներով վեր ելլել։

ՆՈՅՆ. — Շաբաթ իրիկուան վերջին պալօին ներկայ գտնուող երիտասարդ մը, որ չորս քարեջուրին ստակը չկրնալով ալ, բալթօն աւանդ ձգած էր կառսքօպին, այս անգամ յիշեալ մարդուկը կը խնդրէ Հանրագիտակէն, որպէսզի հրապարակէ աճուրդի տրուիլը մինչեւ գալ շաբթու։

ՍԿԻԻՏԱՐ. — Կիսակործան Աղքատականամիւն անցեալ օր տեղեկագիր մը ներկայացուեցաւ, որուն մէջ հիւանդ մարդու մը առողջ կնիկ մը յանձնարարուած էր բժշկին կողմէ։ (Կը տեսնէք թէ բժշկութիւնը ուր տեղուանքը տարած է յաջողութիւնը. Ծ. Խ.)։

ԳԱՏԸ-ԳԻԻՂ. — Երկու տարուան նըշանածը ձեռքէն առնելով գլխէ հանող օրբեւարիէն վրէժ լուծելու համար, տեղացի օրիորդ մը այս կիրակի Մօտայի հրապարակը մինամարտի հրաւիրած է իր հակառակորդուհին՝ ժամը 9ին (Ը. Թ.)։ (Կեցէք բապուճներս հագնիմ՝ որպէս զի ես ալ գըտնուիմ. Ծ. Լ.)։

ՊԵՅ-ԳՕԶ. — Հոս անցեալ շաբթու, գիշերը կատարուած Արեւազալը երկու դասերէն՝ արու էգ կատարուեցաւ։ Եռաձայնէն վերջ այս նորոյթը մարտուելիք բան չէ չիտակը հէ՛ Լիւա... (Իմ անունս Լիւա չէ այս հարցումին համար, այլ... Պիղատոս։ Ծ. Լ.)։

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Պալծներու երեսէն անկողին ծառայող զիւպպերուն համար չորս կողմէն Տէր ողորմեայ կը խնդրուի... (Աստուած շատ քաշիկ չիտայ. Ծ. Խ.)։

ՆՈՅՆ. — Մեծ պահքի երկրորդ շաբաթը բլալուն մոռմոռոզէն թիւյ մ'ալ փրցուեցաւ տուտուլու տուններու մէջ։

# ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՈՐԱԳԻՏԱԿ

Արանց, Կանանց եւ Յոյսոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

## Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Հաւան, Թօփալեան խան  
Սոյն վաճառատունը, որ տարիներէ  
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց  
տոկոսութեամբ եւ գիներու անմրցելի  
աժանութեամբ չահած է բոլոր իրեն  
գիմուդ յաճախորդաց վստահութիւնը,  
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր  
հագուստներու, կանանց թելոթիւններու  
եւ տղայոց չիք եւ դիմացկուն ֆաբրի-  
կներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,  
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն  
անոնց, որոնք պէտք ունին ներկայ  
եղանակին հագուստի եւ ուրիշ նման-  
ընակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 շրշ. է:  
Գաւառներէն յանձնարարութիւնք  
փութով կը կատարուին: 50—24



ԱՌԻԹԵՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՑԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍՍԳՈՒԼԵԱՆԻ

Ճեռալ պէյ խանին  
սակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,  
որք ուղղակի ներածուելով Սեյանէ,  
Ջիսասանէ, Հնդկասանէ, Ճալաէ եւ Ճա-  
րոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըր-  
նան գոհանալ թէյերու թարմութեամբ  
հոտոյն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-  
տուկ խառնուրդները, որք կը ծախ-  
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտային:

# ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

## ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷԶԵՐՈՎ ԵՒ ՃՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒՄԾ

|                                  |            |           |        |
|----------------------------------|------------|-----------|--------|
| Կ. Պոլսոյ համար տարեկան բաժնեգին | 50 դր.     | Վեցամսեայ | 25 դր. |
| Գաւառաց համար                    | » » 54 »   | » »       | 27 »   |
| Արսասանման                       | » » 12 ֆր. | » »       | 6 ֆր.  |

## Կ Ա Ն Խ Ի Կ

ՀԱՍՑԷ՝

ՂԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ. Պապը-Ալի հասեքի Աւստուրեան տպարան քիւ 52.

Դաւառներու մէջ զործակալներ կը փնտռուի, պայմանու որ երաշխաւոր մը ցոյց տան  
թէ միշտ նոր բաժանորդներու անունին եւ հասցէին կցեն նաեւ բաժնեգինները:

Դրամները պէտք է ղրկուին կամ Օսմ. Մանտաքութով եւ կամ բոսթայի փութով 20 հաւաք  
20 ղրուչի հաշուով:

# ՊԱՀՔ

Ամենքնիս ալ պահք բռնելու ետեւէ՝ ենք. ասիկա կը հարցնենք մենք մեղի. բայց քիչ մը մտածելէ ետքը, նորէն մենք մեզի կը պատասխանենք թէ՛ ո՛չ, մենք պահք բռնելու ետեւէ չենք, քանի որ, չենք կարգար 8. Գրքընճանի ԸՆԴԱՐՁԱԿ ԵՐԳԵՅՈՂՈՒԹԻՒՆները, թէ՛ առաւօտեսն և թէ՛ Ս. Պատարագի, որոնք երգելով է որ Մեծ Պահքը մեծ համբերութիւնով կրնանք անցընել և այս միակ գիրքն է որ կրնայ կորուսեալ հոգիները փրկութեան մէջ առաջ-նորդել: Գլընճեան գրատունը ամէն Հայ Առաքելական դաւաններու տրամադրութեանը տակ դրած է այս հոգեկորոզ գիրքը՝ ի գին... 60 փարայ: Կեդրոնատեղին՝ Չագմագճըլար Գլընճեան Գրատունը՝ թիւ 25:

Սոյն գրատունը նաեւ 1907ի եւ 908ի Հանրագիտակի բացառիկ թիւերուն միակ կեդրոնատեղին է:

## ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

### ՄԱՏԱՄ ՃԱՆԻԿ ՔԵՍՃԵԱՆ

3 Պահչե-գաբու թիւ 3

Սոյն վաճառատան մէջ պիտի կրընաք գտնել այն ամէն չիք, տոկուն և աժան առարկայները, որոնք թօհաֆիյէի մաս կը կազմեն: Անգամ մը այցելելը համոզում պիտի կրնայ գոյացնել թէ ուրիշ ո՛ր եւ է տեղ չպիտի կրընաք գտնել նոյնքան ճոխ մթերք մը այն բնառուած արթիքօլօին վրայ:

## ԳԱՌՆԻԿ ՔԵԾԻՇԵԱՆ

ՆՈՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

4. Պոլիս Հանօ-Բուլօ<sup>2</sup> խան իբւ 2

Նախ փորձառուները, յետոյ խաբուղնները միայն գիտեն էթ ո՛րչափ դժուար է, ղտնել ու գնել ապրանքներ՝ որոնք թէ տոկուն ըլլան՝ թէ ճաշակաւոր և թէ ... աժան:

Գառնիկ Քէչիչեան վաճառատունըս թօհաֆիյէի էն առաջնակարգ Եւրոպական գործարաններէն բերել տուած է տեսակ տեսակ կանանց և արանց յատուկ ֆանելաներ, գուլպաներ, քաւիկնակներ, ձեռնոցներ, փողկապներ, բոլորեցներ, ֆիլիսօս և խիստ ճաշակաւոր ներգնացալիկներ, գլխու շարքեր, քաւ ֆոսֆօներ ևլն. ևլն.

Ջերմապէս կը յանձնարենք անգամ մը այցելել այդ վաճառատունը, ուրկէ անպատճառ գոհ մնացողներ միշտ հոն գիմելով պիտի հաստատեն թէ՛ զինքնու աժանութեան, ճեսալի ազնուութեան և ապրանց տոկունութեան երեք առաւելութիւնները ուրիշ ո՛ր և է տեղ կարելի չէ գտնել: